

Հ. Ե. Օհանյան

ԱԾԱԿԱՆԻ ԵՎ ՄԱԿԲԱՅԻ ՀԱՐԱԲԵՐԱԿԳՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Ածականի և մակբայի հարաբերակցության հարցը տակավին իր ամբողջական լուծումը չի ստացել հայ քերականագիտության մեջ¹։ Դա, իհարկե, բոլորովին էլ պատահական չէ։ Մի կողմ թողնելով այն, որ ածականն ու մակբայը, իբրև հատկանիշ արտահայտող խոսքի մասեր, հանգես են բերում խոսքի մասային ու քերականական-ձևաբանական ավելի շատ ընդհանրություններ ու շփման եզրեր, քան դրանցից յուրաքանչյուրը կարող է ունենալ մի այլ խոսքի մասի կամ ցանկացած երկու ուրիշ խոսքի մասեր իրար հետ, իսկ գա, անպայման, դժվարություն է ստեղծում դրանց հարաբերակցության աստիճանն ու էությունը վճռելու խնդրում, նշենք դժվարություն ներկայացնող հետևյալ մոմենտները՝ 1. հայերենում որականան ածականների մի մասը առարկայի հատկանիշ արտահայտելուց բացի, կարող է արտահայտել նաև գործողության ու առարկայի հատկանիշի հատկանիշ, իսկ մակբայների մի մասը՝ գործողության հատկանիշից բացի, նաև ածականի և երբեմն էլ նույնիսկ առարկայի հատկանիշ։

Օրինակ՝ լավ երգել, գեղեցիկ պարել, բարձր խոսել, վատ ընթերցել,

«Այսօր դու ֆաղցր ես նայում, առավոտ...»

Եվ լայն է բացված հեռուն արևոտ...»։

(ՎՏ, Երկ., էջ 199)

«...Կարծես նանիկ է գգվանքը Ձեր հեզ,

Երբ մեղմ հանգչում է կրակն այս աղոտ»։

(Նույն տեղում, էջ 267)։

«Զվարթ անցորդին ուրախ կը ժպտամ,

Ինքըս ինձ կերգեմ...»։

(Նույն տեղում, էջ 174)։

«Նա դիտմամբ ջանում էր ուղղակի ցույց անել իր անսահման բարձր աստիճանը մեծամեծներից» (ԴԴՎ, էջ 63)։

«...Փիլոյի իմաստաբանությամբ այդ նշանակում էր, թե կամբարյանը բացարձակ մաքուր է, ոչ ոքի բաժին չի յուրացրել» (ՆՁՀ, էջ 535)։

«...Պատահեցա ես մի հազվագյուտ ֆաղափավարի մարդու...» (ՄՆ, ԲԵ, էջ 144)։

«Մանր, սարսափելի ծանր տպավորություն արավ մեզ վրա կույր հոր ու որդու երևալը» (ՄԳՄ, էջ 92)։ «Գարեգինը սաստիկ անհանգիստ էր ու մտախոհ...» (ՄԽՀ, էջ 533)։

Տերյանից բերված օրինակներում որականան ածականները դրվել են բայի վրա, ցույց տալով գործողության հատկանիշ, իսկ մնացած նախադասություններում դրվել են ածականի վրա, արտահայտելով հատկանիշի հատկանիշ։

¹ Մակբայի և ածականի հարաբերակցության հարցը քննության է ենթարկված բան. գիտ. թեկնածու Ա. Ն. Քյուրբչյանի Հայերենի մակբայները անտիպ գիտական աշխատանքում, էջ 148—153 և դր. Ս. Արրահամյանի Ժամանակակից հայերենի չթեքվող խոսքի մասերը (Երևան, 1959) մենագրության մեջ։

«Մասամբ սուտ, մասամբ ստույգ զանազան լուրեր սկսեցին մի նախանձախնդրի բերանից հաղորդվել մյուսին...» (Նար-Դ, Իժ, հ. 2, էջ 18)։

«Ճղանակը տակավին պարզ էր. արեղակը տակավին ջերմ ու պայծառ, օդը տակավին հանդարտ» (Շիրվ., Եժ, հ. 2, էջ 127)։

«Ծիշտ է, լիովին վստահ եմ իշխան Կամսարականի փորձառությունը...» (ՍՏՁ, ՊԹ, էջ 110)։

«...Բայց նրա մեջ խաղացին երկու հագիվ նշմարելի կայծեր» (ԴԴՎ, էջ 191)։

«Յուր մտքում ծածագում էր, թե յուր միշտ ուրախ, միշտ զվարթ տերը անպատճառ մի «փորացավ» կունենար...» (Բաֆ., Սամվ., էջ 30)։

«Անսահմանորեն երջանիկ եմ ես, Ձերդ բարձրություն...» (ՎԳ. Լերմ. էջ 79)։

Այս նախադասություններում բնորոշված կապակցությունների մեջ մակ-րաջները դրվել են առարկայի հատկանիշի (ածականի) վրա, ցույց տալով նրա հատկանիշը։

«...նշ էր նրա այդ հանկարծակի մահվան պատճառը, — ոչ ոք չիմացավ» (Նար-Դ, Եժ, հ. 1, էջ 413)։

«...Բոլորովին վարմացել էր նրա անսպասելի և հանկարծակի փոփոխու-րյան վրա...» (նույն տեղում, էջ 405)։

«ՍՄԿՊ Կենտկոմի Հունվարյան պլենումը... սովետական ժողովրդին դի-նեց կոյտնտեսային ու սովխոզային արտադրության հետագա արագ զարգաց-ման կոնկրետ ծրագրով» (ՍՂ, 18/3 1961 թ.)։ Այս օրինակներում մակրայը դրվել է առարկայի վրա, ցույց տալով նրա հատկանիշը։ Անհրաժեշտ է նշել, որ նման գործածությունը խիստ սահմանափակ է մեր լեզվում։ Վերջապես՝ թեև չափա-զանց հազվադեպ, բայց հանդիպում ենք այնպիսի դեպքերի, երբ մակրայը դրվում է մակրայի վրա, արտահայտելով գործողության հատկանիշի հատկա-նիշ։ Օրինակ՝ «նա միանգամայն բարյացակամորեն ուսերը թոթովեց» (ՆՁՀ, էջ 43)։

2. Ի տարբերություն մի շարք լեզուների, որոնց մեջ որակական ածական-ներից կազմված մակրայները ունեն իրենց յուրահատուկ քերականական ձևա-վորումը, հայերենում երբեմն բացակայում է դրանց միջև եղած ձևաբանական-քերականական տարբերությունը։

3. Որոշ ածականներ դրվում են բայի վրա, ցույց տալով գործողության հատկանիշ թե՛ անփոփոխ ձևով, թե՛ մակրայակերտ ածանց ստանալով։

Օր.՝ «...Այնպես նուրբ ես և այնպես

Մեղմ ես, մեղմ ես ինձ գրկում...» (ՎՏ, Երկ., էջ 170)։

«Թող ցուլ մեղմորեն

Այս հուրը տխրաբոց...» (նույն տեղում, էջ 194)։

«Սիրել ու կրկին սիրել խնդագին,

Փայփայել Բեհուշ, լինել հարազատ...» (նույն տեղում, էջ 199)։

«...Ուզում եմ մեկին Բեհուշեն սիրել

Ուզում եմ անուշ փայփայել մեկին» (նույն տեղում, էջ 66)։

«...Անջատվեցինք ևս մեկ հանդարտ:
 Կյանքի ճամփին մի ակնթափ...» (նույն տեղում, էջ 4):

«Դալուկ ու կնճռոտ, դեմքերով տխուր,
 Կյանքի որրերն են անցնում համրուրեն...» (նույն տեղում, էջ 88):

«Եվ բարձրացավ իմ դեմ նորեն
 Երկիրն իմ վառ, լուսապսակ,
 Եվ արևը պայծառուրեն,
 Որ պահվել էր լեռների տակ» (ԳՍ, Հատընտիր, էջ 19):

«...Որ վառ պայծառ կըշուղա
 Պղտոր կյանքի ավերից...» (Իս., Եժ, հ. 1, էջ 43):

«— Նիստը վերջացավ...
 — Վերջացավ, — դառր հեղնեց Վարդանը» (ՆՁԶ, էջ 41):

«...Ու Նաջիրան՝ կարծես իր հոգու մոռյալ ամպերի որոտումով՝ դառնուրեն
 հանկարծ հեկեկաց» (ԳՍ, Հատընտիր, էջ 244):

4. Որակական մի շարք ածականներ շին կարող դրսևորվել համեմատության աստիճաններով, մի բան, որ ընդհանրապես հատուկ է մակրայներին, իսկ գործողության ձև ցույց տվող որոշ մակրայներ կարող են հանդես գալ համեմատության աստիճաններով: Դա ածականի առանձնահատկություններից մեկն է: Վերջապես, այդ բոլորին ավելանում է և այն, որ որոշ ածականների և նրանցից կազմված մակրայների համեմատական աստիճանը կազմվում է նույն ձևով: Օրինակ՝

դանդաղ — ավելի դանդաղ,
 դանդաղորեն — ավելի դանդաղորեն,
 առատ — ավելի առատ,
 առատորեն — ավելի առատորեն,
 դաժան — ավելի դաժան,
 դաժանորեն — ավելի դաժանորեն,
 լայն — ավելի լայն,
 լայնորեն — ավելի լայնորեն,
 դրական — ավելի դրական,
 դրականորեն — ավելի դրականորեն:

Ահա, թե ինչու է ածականի ու մակրայի հարաբերակցության հարցի լուծումը դժվարություն ներկայացնում: Քննության ենք առնում վերոհիշյալ հարցը, իհարկե, բոլորովին էլ նրա սպառնիչ պատասխանը տալու հավանություն չունենալով: Դա առանձին ուսումնասիրության նյութ է, և հնարավոր չէ ամբողջական բացատրություն տալ մեկ հոդվածի սահմաններում: Կարծում ենք, որ մեր կողմից կատարվող վերոհիշյալ հարցի ուսումնասիրությունը կարող է այնուամենայնիվ որոշ չափով նպաստել նրա հետագա ծավալուն ու խոր քննությանը:

Ածականը, ինչպես նշվել է վերևում, ավելի շատ ընդհանրություններ է հանդես բերում մակրայի, քան որևէ այլ խոսքի մասի հետ: Դա պայմանավորված է նրանով, որ ածականը երկրորդական գործածությամբ կարող է արտահայտել նաև մակրայական իմաստ, իսկ մակրայը նույնպիսի կիրառությամբ նաև ածականական իմաստ: Անհրաժեշտ է նկատել, որ հարաբերակցվում են միայն որակական ածականներն ու ձևի (որակի) մակրայները: Որակական ածականների մի մասը նախադասության մեջ հաճախակի հանդես է գալիս պարագայական կիրառությամբ՝ դրսևորելով ոչ թե առարկայի, այլ գործողության հատկանիշ, այսինքն՝ մակրայի պաշտոն է կատարում, առանց մակրայանալու: Ածականի մակրայական գործածությունը հայերենում սովորական երևույթ է: Մեր քերականագիտության մեջ հիմնականում արտահայտվել է այն կարծիքը, որ ածականը, բայի վրա դրվելով, դառնում է մակրայ: «Ածականները, — գրում է Հ. Թումանյանը, — լայի վրա դրվելով դառնում են մակրայ: Լավ երգել, բարձր խոսել, խոր մտածել»²): Գրեթե նույն միտքն են արտահայտել Ռուսինյանը, Տեր-Ղեոնդյանը, Այտընյանը, Արեղյանը և պրոֆ. էդ. Աղայանը: Նկատենք, որ Ռուսինյանի մոտ մակրայաբար կիրառված ածականների շարքում տեղ են գտել նաև շատ (խորհիլ), լիչ (խոսել), ուշ (պառկել), ճայնեմ (գրուցել) մակրայները, որոնք նա սխալմամբ համարում է մակրայի պաշտոնով հանդես եկած ածականներ³:

Խոսելով ածականից կազմված մակրայի մասին, Այտընյանը գրում է. «Կան շատ մակրայներ, ուր զուտ ածական անուն են բայի վրա ընկած»⁴: Այդ նշանակում է, որ բառերի խոսքի մասային արժեքը որոշելիս նա առաջնությունը տալիս է ոչ թե նրանց ընդհանուր իմաստին, այլ շարահյուսական կիրառությանը, որը և խանգարում է նրան ածականի ու մակրայի հարաբերակցությունը ճիշտ ըմբռնելու:

Պրոֆ. Մ. Արեղյանը, ելնելով իր մշակած քերականական սիստեմից, մակրայների ճշշող մեծամասնությունը դիտում է իբրև ածականի պարագայական կիրառություն. «Հայերենում, ուրեմն, սակավաթիվ բառերի բացառությամբ, մակրայն ածականի գործածությունն է պարագայական նշանակությամբ»⁵: Հենց այն հանգամանքը, որ ածականները, բայի վրա դրվելով, այնուամենայնիվ չեն զրկվում առարկայի հատկանիշ արտահայտելու իրենց խոսքի մասային հիմնական հատկանիշից, ինքնին վկայում է, որ մենք գործ ունենք ոչ թե մակրայի, այլ պարագայաբար կիրառված ածականների հետ: Պրոֆ. էդ. Աղայանը, ի տարբերություն Մ. Արեղյանի, գտնում է, որ պարագայաբար գործածված ածականը, դառնալով մակրայ, չի զրկվում իր խոսքի մասային արժեքից. այսինքն՝ նա և՛ ածական է, և՛ մակրայ, նա գրում է. «Կան լեզուներ, որոնց մեջ ածականը և մակրայը բոլորովին նույն ձևն ունեն. նրանց տարբերությունը միայն կիրառությամբ է պայմանավորվում. ժամանակակից հայերենում էլ հաճախ ածականը անփոփոխ ձևով նաև մակրայ է. ինչպես՝ ածական լավ (գիրք), արագ (ընթացք), գեղեցիկ (մարդ), հպարտ (մարդ), խիստ (հայացք), մակ-

2 Հ. Թումանյան, Համառոտ ստուգաբանություն հայոց աշխարհարար լեզվի թիֆլիս, 1904, էջ 60:

3 Ռուսինյան, Ուղղախոսություն արդի հայ լեզուին, Կոստանդնուպոլիս, 1853:

4 Այտընյան, Քննական քերականություն աշխարհարար կամ արդի հայերեն լեզուի վրիննա, 1866, էջ 113:

5 Մ. Արեղյան, Աշխարհարարի շարահյուսություն, Վաղարշապատ, 1912, էջ 8:

բայ լավ (գրել), արագ (գնալ), գեղեցիկ (խոսել), հպարտ (քայլել), խիստ (հանգիմանել) և այլն»⁶:

Անհրաժեշտ է նշել, որ պրոֆ. Աղայանի բերած վերջին երեք օրինակները կարող են վերածվել մակբայի՝ մակբայակերտ ածանցների ստանալով. օրինակ՝ գեղեցիկ — գեղեցկորեն, հպարտ — հպարտորեն, խիստ — խստորեն, իսկ արագ-ը թեև մակբայ է, բայց ունի նաև ածականական կիրառություն, զա է պատճառը, ըստ երևույթին, որ իբրև մակբայ սկսել է գործածվել արագաբար (արագորեն) ձևը, արագ-ը թողնելով ածականի համար: Նշանակում է գեղեցիկ, հպարտ, խիստ բառերը միայն ածական են, հետևաբար անփոփոխ ձևով նաև մակբայ չեն: Նրանք մակբայ կարող են դառնալ ենթարկվելով բառակազմական փոփոխության՝ մակբայակերտ ածանցներ ստանալով: Իհարկե, մենք լուրորդ-վին էլ չենք ժխտում ածականի և մակբայի խոսքի մասային արժեքով հանդես եկող բառերի գոյությունը արդի հայերենում: Այդպիսի բառեր կան ինչպես ուրիշ լեզուներում, այնպես էլ հայերենում: Բանասիրական գիտությունների թեկնածու Ա. Ն. Քյուրքչյանը իր «Հայերենի մակբայները» դիսերտացիոն աշխատանքում, առարկելով այն քերականներին, որոնք հայերենում մակբայը ածականից տարբերելու ձևական հատկանիշի բացակայության պատճառով վերացնում են մակբայը իբրև խոսքի մաս՝ այն համարելով ածականի լոկ պարագայական կիրառությունը, գտնում է, որ ածականների պարագայական գործածությունը դեռևս նրանց չի վերագրում մակբայի խոսքի մասային արժեք: Իհարկե, նա չի ժխտում որոշ ածականների՝ մակբային անցնելու հանգամանքը: Այդ դեպքում, նրա կարծիքով, մակբայի վերածված ածականները բոլորովին կորցնում են առարկայի հատկանիշ արտահայտելու ածականի խոսքի մասային առանձնահատկությունը: Այլ խոսքով, Ա. Ն. Քյուրքչյանը սխալ համարելով մակբայը ածականի պարագայական կիրառություն դիտելը, չի ժխտում այնուամենայնիվ որոշ ածականների՝ մակբայի շարքն անցնելու պրոցեսը:

Դոց. Ս. Արրահամյանը գտնում է, որ կան որակական ածականներ, որոնք առանց իրենց խոսքի մասային պատկանելությունը փոխելու կարող են արտահայտել նաև հատկանիշի հատկանիշ: Այդ դեպքում նրանք մակբայ չեն դառնում, այլ մնում են իբրև ածական, ձեռք բերելով մի նոր ֆունկցիա՝ պարագայական կիրառություն: Անդրադառնալով ածականների ու մակբայների կիրառությունների զուգադիպություններին, նա գտնում է. «Որակական ածականները հաճախ մակբայների պես ցույց են տալիս հատկանիշի հատկանիշ, թեև նրանց համար լնորոշն ու էականը առարկայի հատկանիշ ցույց տալն է: Այս դեպքում ածականը չի փոխում իր խոսքի մասային պատկանելությունը, այլ միայն ստանում է նոր ֆունկցիա: Այսպես՝ լավ աշխատեց, բարձր խոսեց, զոհ ժպտաց, իիանալի պատասխանեց և նման օրինակներում ընդգծված բառերը կատարում են պարագայի ֆունկցիա: Բայց դրանք ավելի հաճախ և ավելի սովորական ձևով գործածվում են գոյականների հետ և ցույց են տալիս առարկայի որակական հատկանիշ, մի իմաստ, որ բնորոշ է ածականների համար»:

Մեր կարծիքով ածականի ու մակբայի հարաբերակցության հարցին ճիշտ մոտեցում է ցուցաբերում Ս. Արրահամյանը՝ պարագայական կիրառությամբ հանդես եկող ածականները չհամարելով մակբայներ: Մեր լեզվի մեջ լավ, վատ.

6 էդ. Աղայան, Հեզվարանության ներածություն, Երևան, 1952, էջ 363:

7 Ս. Արրահամյան, Փաճանակակից հայերենի չթերվող խոսքի մասերը, ՀՍՍՌ ԳԱ Հրատարակչություն, Երևան, 1959, էջ 22:

բարձր, ցածր, փաղաքուշ, խիստ, գոհ, գեղեցիկ, հիանալի, հմուտ, խիզախ, հպարտ, ազատ, ազահ, համարձակ, հակիրճ, համառոտ, խաղաղ, հանդարտ, անուշ, քաղցր, զիլ, լուռ, մերկ, մանրամասն, քնքուշ, խելոք, ամուր, քաջ, պինդ, ուժգին, գլխաբաց, սխալ, ուղիղ, խոր, ճիշտ, կոպիտ, մաքուր, լայն, անջատ, աշխույժ, զգուշ, արդար, բարի, դաժան, դանդաղ, դժվար, հեշտ, թույլ, լուրջ, խառն, խեթ, կարճ, երկար, կոշտ, կոպիտ, համեստ, հասարակ, հավասար, մանր, ակտիվ, թեթև, ընդարձակ, ճարտար, հավատարիմ, հարազատ, ճշգրիտ, անշեղ, համր, ծուլ, շռայլ, ուրախ, տխուր, պարզ, որոշակի, ջերմ, վստահ, ազնիվ, ահեղ, արդարացի, բարեխիղճ, բազմակողմանի, բուն, համընթաց, ինքնուրույն, կողմնակի, անմիջական, համերաշխ, սահուն, սառ, վայելուշ, փարթամ, աղոտ, առատ, առույզ, գոռոզ, դառն, միտ, լիր, կայտառ, համառ, հուշտ, հեշտ, հիմար, ճարպիկ, նուրբ, պայծառ, սերտ, սուրբ, զգաստ, անողոք, պարզամիտ, գիտակից, անաչառ, բնական, բանական, թեթև և այլ որակական ածականներ առարկայի հատկանիշ արտահայտելուց լացի, կարող են դրվել նաև բայերի վրա՝ ցույց տալով գործողության հատկանիշ: Այդ դեպքում նրանք ձևեր են բերում մի նոր՝ մակբայական ֆունկցիա, չղադարելով ածական լինելուց: Հենց այն փաստը, որ վերոհիշյալ ածականները պահպանում են առարկայի հատկանիշ արտահայտելու իրենց առանձնահատկությունը, հեշտությամբ կարող են գոյականաբար գործածվել, հղումվել, հոգնակիություն իմաստ դրսևորել, հանդես գալ համեմատության աստիճաններով, վերջապես շունեն մակբայի բոլոր քերականական առանձնահատկությունները, այսինքն՝ միայն հատկանիշի հատկանիշ չեն արտահայտում, և շունեն մակբայի յուրահատուկ ձևավորում, ինքնին վկայում է նրանց ածական լինելու մասին: Այդ ածականները գրեթե առանց բացառության կարող են ստանալ մակբայական յուրահատուկ ձևավորում՝ մակբայակերտ ածանցների երբեմն նաև կերպով, ձևով, եղանակով բառերի ավելացմամբ: Օրինակ՝ ջերմորեն, պարզորեն, խստորեն, մանրամասնորեն, գեղեցկորեն, հպարտորեն, դաժանորեն, համարձակորեն, ազնվորեն, քնքշորեն, մեղմորեն, անշեղորեն, դառնորեն, ազատորեն, հավասարապես, ճարպկորեն, բազմակողմանիորեն, որոշակիորեն, վստահորեն, սրբորեն, այլև վայելուշ կերպով, արդարացի կերպով, աղոտ ձևով (կերպով), սահուն կերպով, հասարակ կերպով (ձևով, եղանակով) և այլն: Այս դեպքում մենք արդեն գործունենք որակական ածականներից կազմված մակբայների հետ: Անհրաժեշտ է նշել, որ ածականներից -որեն ածանցով մակբայների կազմությունը խիստ արտադրողական է արդի հայերենում: Դա բացատրվում է նրանով, որ այդ ածանցը լիովին զրկվել է գրաբարյան օրէն(ք) բառի նյութական իմաստից, որից առաջ է եկել նա, և ձևեր բերել չափազանց վերացական իմաստ: Այդ է պատճառը, որ -որեն ածանցով կազմվում են մակբայներ -բար, -պես մակբայներին զուգահեռ: Ավելին, նրա վերացական իմաստի շնորհիվ է, որ այժմ նա հիմնականում դրվում է ածականների վրա՝ վերջիններս վերածելով մակբայի: Մ. Արևիզյանը -որեն ածանցի վերացական բնույթը պայմանավորում է նրանով, որ նա միայն «ածականը վերածում է մակբայի «կերպով» բառի նշանակությամբ»⁸:

Ի տարբերություն դրաբարի, որտեղ -որեն ածանցը հիմնականում դրվում էր գոյականների (մասամբ նաև ածականների) վրա և կազմում մակբայներ ու

⁸ Մ. Արևիզյան, Հայոց լեզվի տեսություն, Երևան, 1931, էջ 275:

ածականներ և նույնիսկ գոյականներ, ժամանակակից հայերենում այդ ածանցը դրվում է մեծ մասամբ ածականների (հազվադեպ նաև գոյականների) վրա և նրանցից կազմում մակրայներ նկարագրական նշանակությամբ:

Մ. Արեղյանը — ուրեմն ածանցի վերացական իմաստի վերաբերյալ գրում է. ««Որեն» ածանցը մաքուր վերացական բնավորություն ունի, քանի որ դա այլևս չենք կապում «օրէնք» բառի հետ, ուստի և դրանով ավելի են ածանցվում, քան համանիշ բառ և պես բառերով: Օրինակ՝ սղփափափա, աղփափապես և աղփատուրեն բառերից առաջինը նշանակում է իրրև աղքատ, աղքատ լինելով, երկրորդը՝ աղքատի պես, մինչդեռ երրորդը նշանակում է լուր աղքատ կերպով, այսինքն մի լուր մակրայ է աղքատ ածականի»⁹: — Ուրեմն ածանցի գործուն լինելու շնորհիվ այսօր էլ ածականներից կազմվում են մակրայներ, որոնք առայժմ գործածվում են ածականներին զուգահեռ:

Ռուսերենում և լատիներենում որակական ածականներից կազմված մակրայները ունեն իրենց յուրահատուկ ձևավորումը: Այսպես՝ ռուսերենում. хороший, быстрый, женский, ясный, низкий, глупый, высокий, глубокий, гордый, сильный, крепкий, чистый, слабый և այլ որակական ածականներին զուգընթաց կան хорошо, быстро, жестоко, ясно, низко, глупо, высоко, глубоко, гордо, сильно, крепко, чисто, слабо մակրայները, որոնք իրենց ձևով ու կիրառությամբ միանգամայն տարբեր են ածականներից: Նույն բանը գոյություն ունի նաև լատիներենում:

Այսպես՝ altus-alte	(բարձր)	firmus-firme	(ամուր)
facilus-facile	(հեշտ)	largus-large	(առատ)
bonus-bone	(լավ)	fortis-fortiter	(ուժեղ)
malus-male	(վատ)	longus-longe	(երկար)
acer-acriter	(սուր)	pulcher-pulchre	(գեղեցիկ)

և այլն: Առաջին շարքի բառերից՝ ածականներից իրենց յուրահատուկ վերջավորությամբ տարբերվում են երկրորդ շարքի բառերը՝ մակրայները: Պետք է նկատել, որ ժամանակակից հայերենի արդեն լուրջ է ռուսերենի ու լատիներենի ուղին՝ որակական ածականներից կազմված մակրայների համար ստեղծելով առանձնահատուկ վերջավորություններ կամ միջոցներ: Հետևաբար ճիշտ չեն այն քերականները, որոնք պնդում են, թե պարագայաբար կիրառված ածականները մակրայ են: Այդ տեսակետը ամուր կերպով պաշտպանվում է Մ. Արեղյանի կողմից: Նա ածականներն ու մակրայները, իրրև հատկանիշ արտահայտող բառեր, միավորում է մակադրական բառեր անվան տակ: Բայց, եթե նրա մոտ ածականը արտահայտում է առարկայի հատկանիշ, ապա մակրայը՝ հատկանիշի հատկանիշ: Ածականների պարագայական կիրառությունը բացատրելով մեր լեզվի բուն մակրայների սակավությամբ, նա գրում է. «Հայերենում բուն մակրայները սակավաթիվ են, այսինքն քիչ բառեր կան, որոնք միայն իրրև մակրայ գործածվեն: Մեր մակրայներն ամենամեծ մասամբ դրությամբ միայն մակրայ են. երբ ածականների ցույց տված հատկանիշը վերաբերում է ոչ թե առարկային, այլ առարկայի հատկանիշին, այդ ժամանակ ածականներն առնվում են իրրև մակրայ: Հայերենում, ուրեմն, սակավաթիվ բառերի բացառությամբ, մակրայն ածականների գործածությունն է պարագայական նշանակությամբ...»¹⁰: Մակրայի՝ իրրև ածականի պարագայական կիրառության՝ ըմ-

⁹ Նույն տեղում, էջ 275—276:

¹⁰ Մ. Արեղյան, Աշխարհարարի շարահյուսություն, Վաղարշապատ, 1912, էջ 8:

բրոնմանը հանդիպում ենք նաև Մ. Աբեղյանի «Հայոց լեզվի տեսություն» աշխատության մեջ: Խոսելով «սաստիկ ֆամիլ», «սաստիկ կարմուրյուն», «սաստիկ կարմիր» և «սաստիկ կարմրեց» կապակցությունների մասին, նա առաջին երկու կապակցություններում սաստիկ բառը համարում է ածական, վերջին երկուսում՝ մակբայ, նկատի առնելով այն հանգամանքը, որ վերջին երկու կապակցություններում այդ բառը դրվել է ոչ թե գոյականի, այլ բայի և ածականի վրա: Այստեղից եզրակացնում է. «Հայերենում մակբայը, ուրեմն, ածականի առանձին կիրառությունն է շարահյուսական կապակցության մեջ»¹¹: Ածականի և մակբայի հարաբերակցության վերոհիշյալ բացատրությունը բխում է Աբեղյանի մշակած քերականական սիստեմից: Դա պայմանավորվում է բառերի խոսքի մասային պատկանելությունը նրանց շարահյուսական կիրառությամբ: որոշելու նրա ըմբռնմամբ: Կարևոր է նշել, որ եթե պարագայաբար կիրառված ածականները Աբեղյանը համարում է մակբայ, ապա նույն կիրառությամբ գոյականները չի համարում այդպիսին¹²: Թեև գոյականի ու անորոշ դերբայի պարագայական գործածությունը սովորական երևույթ է մեր լեզվում, բայց ոչ ոք դրանք մակբայ չի համարում: Օրինակ՝ Հայրը ֆնջոքյամբ գրկեց իր որդուն ու համբուրեց նրան: Աշակերտները ուրախությամբ դիմավորեցին իրենց սիրելի ուսուցիչներին: Պիոներները երգելով մտան դահլիճ: Որոշ մարդիկ խմելով են մոռացության տալիս իրենց վշտերը: Զինվորները ֆաջոքյամբ կռվեցին թշնամիների դեմ և հաղթությամբ վերադարձան իրենց տները:

Այս նախադասությունների մեջ ընդգծված բառերը չնայած պարագայի պաշտոն են կատարում, բայց մակբայ չեն դառնում, չեն մակբայանում, նրանք պահպանում են իրենց խոսքի մասային հիմնական իմաստը: Իհարկե, դրանով չի բացառվում գործիականով հանդես եկող որոշ բառերի մակբայի վերածվելու հանգամանքը: Այսպես՝ հազիվ, խստիվ, մասամբ, անձամբ, սակավ, շուտով, դիտմամբ և նման մակբայները ծագել են գործիական հոլովից: Չեն բացառվում նաև պարագայաբար գործածվող որոշ ածականների մակբային անցնելու դեպքերը: Այսպես՝ անդադար, անդուլ, անընդհատ, անվերջ, անխնա, անհպաղ, անխափան, շարունակ և այլ մակբայներ առաջ են եկել ածական-մակբայ փոխանցման ճանապարհով:

Բանասիրական գիտությունների թեկնածու Ա. Ն. Քյուրքչյանը գործողության հատկանիշ արտահայտելը համարելով մակբայի խոսքի մասային առաջին և հիմնական առանձնահատկությունը, մակբայ չի համարում այն բառերը, որոնք նախադասության մեջ գործողության հատկանիշ արտահայտելուց բացի դրսևորում են նաև գործողության ու առարկայի հատկանիշի հատկանիշ. «...եթե տվյալ բառը, — գրում է նա, — նախադասության մեջ ցույց է տալիս էլի այլ բան, քան գործողության հատկանիշ, գործողության և առարկայի հատկանիշի հատկանիշ, այդ բառը մակբայ չէ»¹³: Անհրաժեշտ է նշել, որ նման տիպի բառերը շատ սակավ են մեր լեզվում, և առանց դժվարության կարելի է որոշել նրանց խոսքի մասային պատկանելությունը: Նա առարկայի ու գործողության հատկանիշ արտահայտող լավ, վատ, հպարտ, խելոք, բարձր, ազատ, ամուր, պինդ, բորիկ, քաջ, համարձակ, հակիրճ, համառու, միաբերան, միա-

11 Մ. Աբեղյան, Հայոց լեզվի տեսություն, Երևան, 1931, էջ 131:

12 Տե՛ս Մ. Աբեղյան, Աշխարհաբարի շարահյուսություն, Վաղարշապատ, 1912, էջ 8:

3 Ա. Ն. Քյուրքչյան, Հայերենի մակբայները, դիսերտացիոն աշխատանք, էջ 148:

ձայն, բարձրաձայն, նոր, մանրամասն, մանրակրկիտ, երկար, միալար, գոց, հանդարտ, խաղաղ, մեղմ, անուշ, քաղցր, մերկ, լուռ և այլ որակական ածականներին վերագրում է նաև մակբայի խոսքի մասային իմաստ։ Նրա կարծիքով հայոց լեզվի վարդապետան ընդհանուր էությունը, բայցի վերոհիշյալ առավել գործածական ածականներից, Ան ժխտական նախածանցով կազմված մի շարք ածականներ հենց խոսքից դուրս էլ ունեն մակբայի խոսքի մասային իմաստ։ Դրանք են՝ անաշխատ, անբարբառ, անգիր, անդարձ, անթարթ || անթարթելի, անխարդախ, անխափան, անխիղճ, անխոս, անխնա, անխտիր, անկաշառ, անկարծ || անկարծահաս, անհանգիստ, անհագ, անհաս, անհետ, անհոգ, անձայն, անձանձիր, անմխիթար, անմոռաց, անմոռուն, անհաշող, անհայտ, անհիշատակ, աննկատելի, աննկնգ, անշարք, անշեղ, անշփոթ, անողորմ, անպատկառ, անսահման, անսայթաք, անսասան, անսխալ, անվախ, անվերջ, անվրդով, անվնաս, անվրեպ, անտեղի, անտրտուն, անտարբեր, անփուլթ, անփոփոխ և այլն։ Ըստ որում, նրա պնդմամբ փոխանցման մոմենտը դեպի մակբայը ավելի է ընդգծված անխոս, անձայն, անխտիր, անգիր, անդարձ, անվերջ, անխնա, անմոռուն, անշաղթ, անսայթաք, անտեղի, անտրտուն և այլ բառերում¹⁴։

Չմոռանալով նշել, որ նման մոտեցմամբ հենց խոսքից դուրս էլ մակբայի իմաստ ունեցող ածականների շարքը պետք է դասվելին նաև անաշառ, անարդար, անբասիր, անխոտոր, անխոռով, անկոխ, անկախ, անհամաշափ, անհաշտ, անհաստատ, անշեղ, անորոշ, աննկատ, անվախճան, անվայելուշ, անվարժ, անվարձ, անվթար, անվիշտ, անվհատ, անվստահ, անհողողող, անվտանգ և ան ժխտականով կազմված այլ ածականներ, որովհետև նրանք նույնպես կարող են արտահայտել նաև գործողության հատկանիշ և բառարաններում էլ արժեքավորվում են որպես ածականներ ու մակբայներ։ Այնինչ դրանք, այլև Ա. Քյուրքչյանի վերը նշած բառերը ածական են, բայց ունեն նաև պարագայական կիրառություն, բացառությամբ միաբերան, միաձայն, բարձրաձայն բառերի, որոնք մակբայ են։

Քանի որ ածականի համար սովորական է բային լրացնելով նաև գործողության հատկանիշ արտահայտելը, իսկ մակբայի համար գրեթե բացառված է գոյականի վրա դրվելով, նաև առարկայի հատկանիշ արտահայտելը, ուստի տվյալ բառը, եթե կարող է արտահայտել առարկայի, նրա հատկանիշի ու գործողության հատկանիշ, ածական է, որը կարող է ունենալ նաև պարագայական կիրառություն։ Այդ տեսակետի օգտին է խոսում մի ուրիշ հանգամանք. գործողության հատկանիշ արտահայտող ածականները կարող են բայի վրա դրվել թե՛ անփոփոխ, թե՛ մակբայակերտ ածանցների ու ձևերի (բառերի) հետ առադրվելով։ Առաջին դեպքում մենք գործ ունենք ածականի, երկրորդում՝ նրանից կազմված մակբայի հետ։ Վերջինս արդեն հանդես է գալիս յուրահատուկ քերականական ձևավորմամբ։ Ս. Արրահամյանը, խոսելով լավ աշխատեց, բարձր խոսեց, զոհ ժպտաց, ճիանալի պատասխանեց կապակցությունների մասին, գրում է. «Եթե նկատի ունենանք, որ մակբայները, լինելով հատկանիշի հատկանիշ ցույց տվող բառեր, սովորաբար չեն դրվում առարկայի անվան վրա, ապա պարզ կդառնա, որ վերոհիշյալ օրինակներում ընդգծված բառերը ածական են և կարող են ունենալ և ունեն նաև պարագայական կիրառություններ»¹⁵։

¹⁴ Ա. Ն. Քյուրքչյան, Հայերենի մակբայները, դիս. աշխատանք, էջ 149—151։

¹⁵ Ս. Արրահամյան, Ժամանակակից հայերենի շեքվող խոսքի մասերը, Երևան, 1959, էջ 22։

Ոչ միայն ձևական, այլև իմաստային նուրբ տարբերություն կա մեղմ-մեղմորեն, քնքուշ-քնքշորեն, վեհ-վեհորեն, համառ-համառորեն, մտերիմ-մտերմորեն, հպարտ-հպարտորեն, լուրջ-լուրջ կերպով (լրջորեն), ճիշտ-ճիշտ կերպով (ճշտորեն), ազատ-ազատ կերպով, ազահ-ազահորեն (ազա՜հ կերպով) և այլ բառերի միջև: Վերջիններիս մեջ ավելի շատ է ընդգծվում դործողության կատարման ձևը, քան առաջիններում: Գործողության կատարման ձևը շեշտվում է և այն դեպքում, երբ գործողության հատկանիշ արտահայտող որակական ածականները ստանում են փոքրացուցիչ կամ փաղաքշական մասնիկներ, օր.՝ «...ծրագի մեջ, ասես, թե՛ նա

Երգէց մեղմիկ մի տխուր տաղ...» (Իս., եժ, հ. 2, էջ 41):

«Ու փիրուզե լեռներից իջավ մեղմիկ ու թաքուն
Սիրահարը վարդերի — զեփյուռը նրբին...» (ԳՍ, Հատընտիր, էջ 251):

«Գիշերն է իջնում հեզ ու հանդարտիկ,
Գազանն է ննջում, ննջում էն մարդիկ...» (ՎՏ, Երկ., էջ 104):

«էդպես տխուր ու զարհուրիկ
Ի՞նչ ես լալիս, կըկու քուրիկ» (ՀԹ, էջ 240):

«...Մեղմիկ խըշշաց ցորեն, ցողուն,
— Սիրտըս անդորր կըծփա» (Իս., եժ, հ. 1, էջ 47):

«...Մարդիկ կուգան, ինձ կնայեն,
Լոիկ-մնջիկ կանց կենան...» (Իս., եժ, հ. 1, էջ 59):

«Մի ձեն եմ լըսում.
Ոնց է մի աղջիկ
Մեղմ ու հանդարտիկ
Անվերջ արտասվում» (ՀԹ, հ. 1, էջ 128):

Ընդգծված բառերը թեքվում են դեպի մակբայները. նրանց մեջ ավելի շատ շեշտվում է մակբայական, քան ածականական իմաստը: Ժամանակակից հայերենում որակական ածականների մակբայական կիրառությունների մի մասը աստիճանաբար տեղի է տալիս ածականներից կազմված մակբայական ձևերի գործածությանը: Եթե մեր լեզվի հին շրջանում հազվագեպ էին որակական ածականներից ուրեմ ածանցով կազմված մակբայների գործածությունները, ապա այժմ նրանց կիրառությունը չափազանց մեծ է: Արդի հայերենում որակական ածականներին դուրսնալից գործողության հատկանիշ են արտահայտում նաև նրանցից կազմված մակբայները, իսկ երբեմն էլ գրականության մեջ և հատկապես մամուլում առաջնությունը տրվում է վերջիններիս: Այսպես՝ մամուլի լեզվի համար շատ սովորական են լայնորեն, անշեղորեն, ազնվորեն, ակտիվորեն, լրջորեն, հմտորեն, քեմորեն, համառորեն, ֆեֆշորեն, զեղեցկորեն, բազմակողմանիորեն, զգալիորեն և այլ մակբայների գործածությունները: Բավարարվենք միայն մի երկու օրինակներ բերելով: «Անշեղորեն բարձրանում է Ժողովրդի բարեկեցությունը» (ՍՀ, 8/3—1961 թ.), «Սովետական Միությունում

կանայք ակտիվորեն մասնակցում են պետական, քաղաքական ... կյանքին» (ՍՀ, 8/3-1961 թ.):

«...Կին աշխատողները էլ ավելի հմտորեն ու հաստատակամորեն իրենց գիտելիքները, իրենց սաղանդը կգործադրեն...» (նույն տեղում):

«...Խրուշչովը ... հետևողականորեն և հմտորեն պայքարում է ժողովրդական տնտեսության բոլոր ճյուղերի նոր, շեշտակի վերելքն ապահովելու համար» (ՍՀ, 18/3—1961 թ.):

Նման տիպի կիրառությունները բնորոշ են նաև գեղարվեստական գրականության լեզվի համար: Ավելորդ չենք համարում բերել մի քանի օրինակներ գեղարվեստական գրականությունից:

«...Վիշտը ճնշեց սիրտս քնքուշ—

Նա խորտակվեց դառնապես» (Իս., Եժ, հ. 1, էջ 8):

«...Որ վարվնած հոգով երգեմ վեհորեն

Երազըս շրթնաղ, մարդարեական...» (նույն տեղում, էջ 130):

«Կանչում են ինձ հեռուն,

Հեռուն անհայտ ու նոր,

Փաղափշորեն դերում,

Տիրում, ասում օրոր...» (ՎՏ, Երկ., էջ 370):

«Բոցուրտը լույսերի անխոս խնդությամբ

Դու ղաժանորեն նայում ես հեռուն...» (նույն տեղում, էջ 97):

«Կրփարվես մեղմորեն, կրփոես, կրվառես անթառամ՝

Կուսական աշխարհից ծաղիկներն անծանոթ...» (նույն տեղում, էջ 203):

«Ու մի զույգ սիրամարգներ, խոտերի մեջ բուրավետ,

Երփներանգ փետուրներով վեհորեն քայլում էին...» (ԳՍ, Հատընտիր, էջ 262):

«...նա ցույց կտար նրան այն կորուստը՝ դեպի որը նա կուրորեն հետևում էր...» (Նար-Դ, Եժ, հ. 1, էջ 393):

«Եվ նա սկսեց դառնապես արտասվել» (նույն տեղում, էջ 388):

Մեր լեզվի համար սովորական է ոչ միայն վերոհիշյալ սկզբունքով կազմված մակբայների, այլև որակական ածականների՝ կերպով, եղանակով, ձևով բառերի հարադրմամբ ստեղծված մակբայների գործածությունը:

Օրինակ՝ «Օլյան... քնքուշ ձայնով երգում էր, աշխատելով... չաղ պարանոցը գեղեցիկ կերպով ծռել ու բերանը փոփրիկ ու կլորիկ կերպով բացել...» (Նար-Դ, Եժ, հ. 1, էջ 436—437):

«Այնուհետև Բարսեղը... սկսեց գրեթե ամեն օր այցելել յուր նոր բարեկամներին և հետզհետե սևրտ կերպով կապվել նրանց հետ» (նույն տեղում, էջ 436): «...որի հետքերն անջնջելի կերպով դրոշմվում են նրանց վերա և այն անբուժելի կերպով ազդում է նրանց ֆիզիկական առողջության վրա...» (նույն տեղում, էջ 392):

Վերը շարադրածից կարելի է անել մի քանի հետևություններ՝

ա) Ածականը գործողության հատկանիշ արտահայտելիս չի մակրայանում, մակրայ չի գառնում, սակայն, պահպանելով իր խոսքի մասային հիմնական իմաստը և քերականական առանձնահատկությունները, ձևը է բերում մի նոր ֆունկցիա՝ մակրայական կիրառություն, որի շնորհիվ որոշ ածականներ լեզվի զարդացման ընթացքում կարող են վերածվել մակրայի:

բ) Ռուսերենի և լատիներենի նման, հայերենում նույնպես որակական ածականներից կազմվում են մակրայներ, որոնք ունեն իրենց յուրահատուկ քերականական ձևավորումը: Ըստ որում, մակրայներ են կազմվում թե -որեն (մասամբ նաև -բար, -պես) ածանցով, թե կերպով, եղանակով, ձևով բառերը ածականների առադրելով:

գ) Մի շարք որակական ածականների համար սովորական է գործողության ու առարկայի հատկանիշի հատկանիշ արտահայտելը, իսկ մակրայների համար սովորական է առարկայի հատկանիշ արտահայտելը:

դ) Ժամանակակից հայերենում որակական ածականները պարագայբար կիրառվում են նրանցից կազմված մակրայներին զուգահեռ: Իմաստային տեսակետից հաճախ նախընտրելի են մակրայները:

ե) Եթե տվյալ բառը, գործողության հատկանիշ արտահայտելուց բացի, կարող է արտահայտել նաև առարկայի ու նրա հատկանիշի հատկանիշը, մակրայ չէ, այլ ածական, քանի որ մակրայի համար սովորական է առարկայի հատկանիշ արտահայտելը, իսկ ածականի համար սովորական երևույթ է գործողության հատկանիշ արտահայտելը:

ՀԱՄԱՌՈՏԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ԳՍ — Գ. Սարյան, Հատընտիր, Երևան, 1951

ԴԴԿ — Դ. Դեմիրճյան, Վարդանանք, Երևան, 1954

ԻՍ — Ավ. Իսահակյան, Երկերի ժողովածու, Երևան, 1950

ՀԹ — Հ. Թումանյան, Երկեր, Երևան, 1958 (Երկու հատորով)

ՄՆ, ԸԵ — Մ. Նալբանդյան, Ընտիր երկեր, Երևան, 1953

ՄԳՄ — Մուրացյան, Գեորգ Մարկոսյանի, Երևան, 1957

Նար-Դ, ԵԺ—Նար-Դոս, Երկերի ժողովածու, Երևան, 1955 (Երեք հատորով)

ՆՁՀ — Ն. Ջարյան, Հացավան, Երևան, 1955

ՇԻՐՎ., ԵԺ — Շիրվանզադե, Երկերի ժողովածու, Երևան, 1950—1959

ՍՀ — Սովետական Հայաստան օրաթերթ

ՍԽՀ — Ս. Խանզադյան, Հողը, Երևան, 1957

ՍՏՁ, ՊԹ — Ստ. Ջորյան, Պապ թագավոր, Երևան, 1957

ՎԳ, ԼԵՐՄ. — Վ. Գևորգյան, Լերմոնտով, Երևան, 1956

ՎՏ, ԵՐԿ. — Վ. Տերյան, Երկեր, Երևան, 1956

Րաֆ., Սամվ. — Րաֆֆի, Սամվել, Երևան, 1957

Րաֆ., ԵԺ — Րաֆֆի, Երկերի ժողովածու, Երևան, 1956